Ալեքսանդր Ծատուրյան

Սեր

I

Սիրում եմ ես քեզ, մանո՛ւկ գեղեցիկ,
Բայց ոչ տղայական այն անմիտ սիրով,
Որով սիրեցին քեզ շատ պատանիք .

Լոկ գեղեցկությանդ երկրպագելով:
Գրավիչ էիր դու նոցա համար,
Որպես մի խոսուն, պճնազարդ տիկնիկ,
Որ ուներ միայն աչեր բոցավառ,
Վարդագույն շրթունք, սիրուն խոպոպիք,
Որի կուսական գեղանի կուրծքին
Ծաղկում էր փարթամ եդեմ փափկության,
Եվ որի համբույրն ամենքի աչքին
Հեշտալից կըրքի վայելք էր միայն...
Եվ նոքա քո շուրջ միշտ վխտում էին,
Որպես խաղալիք սիրող մանուկներ,
Եվ քո ականջին շըշընջում էին
Քաղցր գովասանք, սիրահաճ խոսքեր...

II

Սիրում եմ ես քեզ, բայց ո՛չ այդ սիրով,
Ո՛վ իմ նազելի՜, թանկագի՜ն ընկեր,
Սիրում եմ ես քեզ այլ զգացմունքով,
Մի սուրբ զգացմունք, որ զով կենսաբեր
Ինչպես գարնան ցող թառամած ծաղկին
Ցողում է լքյալ սրտին թարմություն.
Որ ինչպես զեփյուռ հրրատապ շոգին
Բերում է այրված կրծքին զովություն.
Մի վառ զգացմունք, որ թովի՛չ լուսով
Փայլում է միայն անկեղծ սրտերում
Որ լի ըղձերով, վարդաշո՜ղ հուսով
Մեզ կյանք է տալիս և ոգևորում:
Դու սիրելի ես, փափկասո՛ւն էակ,
Որպես անսպառ աղբյուր երգերիս,
Որպես իմ կյանքի լուսափայլ ճրագ,
Որպես արձագանք լաց ու ծիծաղիս:

III

Սիրում եմ ես քեզ, սիրում ջերմագին,
Ինչպես անդրանիկ մի ծաղիկ գարնան
Որ ավետում ես իմ անվարդ կյանքին
Նորից ծաղկավառ օրեր խնդության .

Որ իբրև շքեղ, դալար մի օազ
Ժպտում ես դու իմ անապատ կյանքում,
Որ իբրև պայծառ, գողտրիկ մի երազ,
Ցնորքի հուր ես վառում իմ կրծքում:
Ի՜նչպես չրսիրել քո քնքուշ հոգին
Եվ այն կանացի զորովն ու զգվանք,
Որ գանձի նըման, ջերմ կուրծքիդ տակին
Պահում ես իբրև հոգուդ զարդարանք.

Որ սիրտըդ լեցուն բո՛ւռն խնամքով.
Պատրաստ ես դու միշտ անտեր, անպաշտպան
Թշվառի համար անկեղծ արցունքով
Ե՛վ լա՛լ, և՛ սիրով փայփայե՛լ նորան...
1893